Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Գրիգոր Գույանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Քրիստինե Խաչատրյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Միջազգային համագործակցության վարչության  գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Շվեդիայի Թագավորության Լունդ քաղաք՝ 2022 թվականի մայիսի 25-ից և հունիսի 2-ը

4. ***Հրավիրող կողմը***
   Շվեդիայի Լունդի համալսարան

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն Լունդի համալսարանի կողմից կազմակերպվող որոշումների կայացման գործընթացքում ներգրավված մարմինների կարողությունների զարգացմանը միտված ծրագրի շրջանակում  Քաղաքային միջավայրում բնահենք լուծումների նորարարական կառավարման հարցերով աշխատաժողով/ուսումնական այցին

6. ***Քննարկված թեմաները***
   - Բնահեն լուծումներով քաղաքային ցուցադրական ծրագրերի ներկայացում
   - Աշխատանքային/ծրագրի թիմի կառուցմանն ուղղված խմբային աշխատանք
   - Որոշումների կայացմանը ուղղված «Taste agile» մեխանիզմի թիմային աշխատանք
   - Ուսումնական այց Մալմո՝ այդ թվում արևմտյան նավահանգիստ, Աուստերգոֆ, Բրունշոգ և Լունդի բուսաբանական այգի
   - Երկրի զեկույցների ներկայացում

## 7. ***Հանդիպումները, ելույթները.***

Շվեդիայի Թագավորությունում գտնվելու ընթացքում պատվիրակությունները այցելեցին բնահեն լուծումներով իրականացված ցուցադրական ծրագրերի տարածքներ՝ Մալմո, Աուստերգոֆ, Բրունշոգ և Լունդի բուսաբանական այգի: Տեղում ծանոթացան կանաչապատման մեխանիզմներին /կանաչ տանիքներ/, ջրահեռացման և արհեստական ջրային տարածքների կառավարման գործընթացին, թափոնների սրտավորման և կառավարման այլընտրանքային տարներակներին, էներգաարդյունավետ բնակելի և ուսումնական հաստատությունների շենքերի էներգաարդյունավետության ոլորտի զարգացմանն ուղղված գործընթացներին, ինչպես նաև վերջիններիս ուղղված ներդրումային հնարավորությունների և ռիսկերի նվազեցման մեխանիզմներին:

Ուսումնական այցերի ժամանակ տեղի ունեցած քննարկումների ընթացքում յուրաքանչյուր կառույցի ոլորտային պատասխանատուների կողմից ներկայացվեցին բնահեն ծագրերի երկարաժամկետ ռազմավարության իրականացման իրենց փորձը:

Շվեդիա այցելության ընթացքում տեղի ունեցավ Լունդի համալսարանի շրջանավարտների հետ համատեղ աշխատաժողովը, որտեղ ներկա ուսանողները և շրջանավարտները (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ադրբեջան) ներկայացրեցին ցուցադրական ծրագրեր: Հարկ է նշել, որ Ադրբեջանի շրջանավարտների կողմից ներկայացվող ծրագրերը վերաբերվում էին Արցախի Հանրապետության Շուշի քաղաքին և հարակից տարածքներին: Հայաստանի պատվիրակության կոցմից պահանջ ներկայացվեց կազմակերպիչներին սահիկաշարից հանել տեղանունների մասին հիշատակումները, ինչը բավարարվեց:

## 8. ***Հադիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը***

Քննարկում-հանդիպումների ընթացքում կարևորվեց հայաստանյան թիմի կողմից ներկայացված է «Երևանի բուսաբանական այգում էկոկրթական կենտրոնի ստեղծում և հիշողության պուրակի ստեղծում» ծրագիրը՝ ոլորտային փոխհամագործակցության արդյունավետությունը ուղղված «կանաչ» միջոցառումների իրականացմանը: Փորձի փոխանակման արդյունքում կարևոր նշանակություն տրվեց պետական, մասնավոր հատվածի և դոնոր կազմակերպությունների գործընկերությանը, ինչպես նաև Կանաչ քաղաքի ռազմավարության շրջանակներում նախանշված համապարփակ միջոցառումների իրականացմանը և քաղաքական կամքին:

9. ***Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

Քննարկում-հանդիպումների ընթացքում ընդգծվեց ուսուցողական այցերի ձևաչափով փորձի փոխանակման արդյունավետությունն ու օգտակարությունը: Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին նոր գիտելիքներ բնահեն քաղաքականությանը միտված միջոցառումների, ֆինանսավորման մեխանիզմների/բիզնես մոդելների, գործիքակազմի, առաջատար եվրոպական համայնքների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ՝ հիմնված քաղած դասերի և լավագույն փորձի վրա: Վասնակից երկրների կողմից ներկայացվեցին առաջարկներ և դիտարկումներ արդյունավետ բնահեն ծրագրերի իրականացման համար: Կարևորվեց նմանատիպ ձևաչափով հանդիպումների անցկացումը, ինչը հնարավորություն է ընձեռում հետագա փոխադարձ աջակցությանը և համագործակցությանը:

Գործուղվող

Ք. Խաչատուրյան

09.06.2023թ.